

րով և աշխատանքով պէտք է նախապատրաստել ուսուցման համար, իսկ ուսուցման ժամանակ պէտք է խիստ ուշադրութիւն դարձնել մարմնի զարգացման վերայ, որպէս զի ուղեղը չձանրաբեռնուի, որ հազարաւորների վատաւորութեան պատճառ է լինում: Թէպէտ և ժամանակի մեծ զոհարերութիւն է պահանջում այս մեթոդը, բայց չպէտք է վախենալ ուսուցման թերի մնալու մասին: Ընդհակառակն ուսումը, որ շատերի համար այժմ տանջանք է, մեծագոյն մասի համար ուրախութիւն կլինի և այժմ նոյնպէս տարածուած և շատերին դժբաղդացնող նեարդային դիւրագրգռութեան հիմքը մանկական հասակից դուրս չի լինիլ: Այժմ բան միանգամայն չէ կատարուում: մարմնամարզութիւն մտցնելը ապագայի բարելաւութեան առաջին յաջող սկիզբն է: Այժմ պէտք է, ըստ կարելոյն շուտ, փոշոտ մարմնամարզարանների տեղ, ազատ օդում մարզել և ձգտել ուսումնարանական կարգ ու կանոնի մէջ շօշափելի փոփոխութիւններ մտցնել, և ես համոզուած եմ որ հետեանքը խիստ գոհացուցիչ կլինի *):

Թարգմ. Գ. Ս.



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անհատներն երբէք կարող չեն այնպիսի ճշգրտութեամբ և գեղեցկութեամբ նկարագրել ու գրուատել մարդկային առաքինութիւններն ու թերութիւնները, ինչպէս Ժողովուրդը: այս է պատճառն ահա, որ մինչդեռ դարերու ընթացքում մոռացութեան են տըրուում մեծագոյն հանճարների գործերն իսկ, Ժողովրդական ստեղծագործութիւններն յարատեւ և անմահ են մնում: Մեծագոյն բանաստեղծների անմահ գործերի աղբիւրներն անգամ Ժողովրդական են, ինչպէս Սոփոկլէսի, Շէկսպիրի և Գէթի թատերախաղերից հոչակաւորները: Այն գրականութիւններն են բարգաւաճել, որոնց հանճարեղ ներկայացուցիչները նիւթ են առել Ժողովրդական իմաստալից ստեղծագործութիւններից: որովհետեւ ամենահանճարեղ արուեստագէտն անգամ անպէտք նիւթից անկարող է գեղեցիկ արձաններ դրօշել: Զարգացման ձգք տող գրականութիւններն ևս նոյն այդ շուրջով պիտի ընթանան, որով ընթացել են արդէն իսկ զարգացման գագաթնակետին: հասածները: Յունական թատերգութիւնը զարգացել է և հասել իւր մեծ հոչակին Ժողովրդական առասպելների (միթոս) շնորհիւ:

Յրանսիական ռոմանտիք կոչուած վիպասանութեան արմատները պէտք է Պրովանսի երգիչների (troubadour) պարերգների մէջ փնտռել: Գերմանական քնարերգութեան բարձր զարգացումն Ժողովրդական երգերին պիտի վերագրել:

Եթէ ցանկանում ենք և մեր գրականութեան զարգացումն, պէտք է մոռացութեան ձանկերից ազատենք մեր հարուստ Ժողովրդական գրականութիւնը:

«Արարատի նախնի»-ից համարում տպագրեցինք մի գեղեցիկ Ժողովրդական վէպիկ, որ նկարագիր էր հայ հովուական կեանքի և սիրոյ յաղթանակի: Ժողովրդական գրականութիւնը խորութիւն չէ դնում մարդկային առաքինութիւնների և թերութիւնների մէջ, նա նոյն սիրով առաքինութիւններն է գերուատում, որպիսի սիրով և մարդկային թերութիւններն է պարսաւում: Այս նուագ տպագրում ենք մարդկային « յիմարութեան » դրուատը: Ժողովուրդը գիտէ իւր դարաւոր փորձերից թէ ի՞նչքան մեծ է և լայնածաւալ մարդկային յիմարութիւնը: Իրեւ այդ յիմարութեան ներկայացուցիչ անձն ու առարկայ իւրաքանչիւր ազգ մի յատուկ անուն ունի, մեր այս առակի մէջ Գասպար անունն է յատկացրած մարդկային անծայր և անիմանալի յիմարութեան: Թէպէտեւ առակիս գրի առնողն անանուն էր թողել այս պատմութիւնը, սակայն յարմար դատեցինք հայ Գասպար դնել սրա վերնագիրը, որովհետեւ սա յատուկ հայկական մտապատկեր է մարդկային անյատակ յիմարութեան և Ժողովուրդը Գասպար է գրել այն երեւակայական անձի անունը, որ առիթ է եղել մարդկային յիմարութեան երեւան գալուն:

Ի՞նչքան գեղեցիկ է պատկերացրած երեւակայութեան յիմարութիւնը, ի՞նչպէս համոզիչ է նրա ներգործութիւնը տկար մտքերի վերայ, ահա թէ ճշտեղ պիտի բացակայենք « յիմարութեան » դէմ աստուածներն էլ անզօր են »:

Բայց ի՞նչքան շատ են այդպիսի երեւակայական աշխարհում ապրողները, Ժողովուրդը գեղեցիկ և անհերքելի կերպիւ ցոյց է տուել այդ կիրակօրի ճանապարհորդութեան նկարագրով: Յիւրաւի արդար է գերմանական ծաղրական ասացուածն՝ թէ « յիմարութիւնն էլ մի շնորհ է, սակայն ի չարը չը պէտք է գործ դնել այդ »: Ոչ միայն անհատներ, այլ նաեւ ամբողջ հասարակութիւններ, Ժողովուրդներ և ազգեր ձեռքից բաց են թողնում իրենց միակ հարստութիւնն և ընկ-

նում են անստոյգ և նախապէս յայտնի անհնար և խաբուսիկ յոյսերի յետեւից: Քանի քանիները իրենց միակ եզր մտրթում են չը ծնուած մեռելի հոգու հաց տալու համար: և կամ չը գնուած ձիւ համար անսո շինելու իրենց եզներն են կորցնում ու անոտը շինելու փոխանակ, աներն են քանդում: Այս մտքի շատ են տանջուել չը ծնուած Գառարների վերայ վայ տալով:

Այս առակը գրեթէ ընդհանուր է բոլոր հայ գաւառներին, այս տեղ տպագրում ենք տրապիզոնցոց բարբառով: Տրապիզոնի բարբառով արդէն իսկ բաւական նմուշներ տպուեցան «Արարատի» մէջ: Այդ բարբառն ունի թէ ձայնական և թէ ձևական տարբերութիւններ: Բարբառիս հետեւեալ յատկութիւնների վերայ եթէ մի քիչ ուշք դարձուի, դիւրին կը լինի հասկանալը:

Տրապիզոնի բարբառում « ձայնը յաճախ օ-ի է փոխուում: օրինակ՝ մօնչ=մանչ, ճօնփայ=ճանփայ, տօմ=տամ, գօմ=գամ, օնուչ=անուչ և ըն: Ու ձայնաւորը փոխուում է «-ի օրինակ՝ ուչ=ուչ, է ձայնաւորը է. օր. միծ=մեծ:

Բաղաձայններից ը ձայնն է, որ կամ կորչում է (օ=որ) կամ շ և յ փոխուում: օրինակ՝ էհայց=եհարց, քույն=քուրն, մաշգ=մարգ, էշտօմ=երթամ և ըն:

Ձևական տարբերութիւններից գլխաւորն է նախ՝ բայական—«շ վերջաւորութեամբ ձևերը. օրինակ՝ ծիծղուշ, գատուշ, բերուշ, վէյուշ, այսինքն՝ ծիծաղելով, գատելու, բերելու, վայելով և ըն. երկրորդ՝ պէք է կոչուել բայական մասնիկներն զրուում են բայի վերջն և պիտին դառնում է— էպէ, օր. չը գօմիտի=չը գամ պիտի, լցուիր կու=կը լցուիր: Բարբառիս այլ յատկութիւնների մասին տեղը չէ՝ այստեղ խօսելու ուստի զանց ենք առնում: առանձին ուշադրութիւն դարձնելով ԻնՅՅ՝ հարցականի վերայ, ուր շ բաղաձայնը դարձել է ց, այս էլ արդեօք յունարէնի ազդեցութիւնը չէ:

Ն. Բ.

ՀԱՅ ԳԱՍՊԱՐԸ՝

Վեր չկեր, պառաւ մը կեր, իսա պառաւն ունիր մէկ մօնչ՝ էրկու աղջիկ տղայ:

1. Հայ ժողովրդեան մէջ ընդհանրացած առակ մ'է այս, այլ ևս այլ կերպով կը պատմեն, իսկ ոմանք Գասպարի փոփոխարէն Վերակոս: Ըստ Հայաստան այս նոյնը կը պատմուի քիչ խաթանք եւ Գիգոյ անուն կտան:

Իսունք էմօն (այնպէս) աղքատ կըլին օ ինչիկ մը (բան մի) ունէին ուչ, պիթուն պիթունէ (բուրովին) աչառ մը ու կով մը կունենօն, էլ հալ (վիճակ) ու մալ ունէին ուչ:

Մօնչը էլ խտրէ (ապրուստ) ընուշի ումուտը (յոյսը) կտած՝ ասաց ուր մօրը—Քա, նէնէ, արօլ էրէ (թոյլ տուր) էշտօմ՝ ղուրպէթ (պանգխտութիւն), դատիմ կըլլի էօր քիշ մը փարայ մարայ դազանմիշ (վաստկիմ)՝ ըլլիմ, առնում ու գօմ, բէլքի (թերեւ) մեղիկի պիտու բօնիրը առնունք, ինա մէկէլ աշըռու հետ չիֆտ (ղոյգ) մը տիւղմիշ ընկը ու բաշլայինք այտ (արտ) քշուշի, ինչաք յիբ էսմօն նաշար ապրինք պիտի:

Էս մօնչու մէրը ու էրկու քուրը քիշ մը խըլառ էին, աստին (ասացին) մօնչուն:

— Գնա, ամմա էգուց արի, էգուց դաս ուչ նա մէկէլ օր արի:

Մօնչն է, իգա խըլառներուն վրայ ծիծղուշով էլաւ, ընկաւ ճօնփայ ու փնաց, շատ քիչ գնաց Աստուած գիտէ, քաղաքի մը ըռաստ էկաւ ու ձեռք էզարկ դատուշի (աշխատելու), Գատեցաւ, դատեցաւ, էփէյիճէ (բաւական) փարա էլից ուր ճէպը, ինքն իրեն ասաց՝ քիշ մէլ կնօմ, ինչիկ մէլ դատիմ, խայճիմ (ծախսեմ), բօն մ'էլ աւելցնիմ, տօնիմ տօմ թագաւորի խարճ (տուրք):

Հոն մնաց վից օխտ օմսու չաք (չափ), դազանմիշ էղած փարէն առաւ, դայձաւ յիտ ուր տունը:

Էս մօնչու օնունք Վիրակոս էր, էրկու քուրը ու մէրը իսա տեղէն, ինա տեղէն բօն մօն ժողուէին ու ապրէին կու, հաւան (օդի մէջ) բռնէին ու թաւան (տապակի մէջ) կուտէին, իրենք էլ հիտար խըլառ խըլառ խորաթէին կու (կը խօսէին):

Վիրակոսի միծ քուր օր մը ինցօ էղաւ, էղառ տէստին (կուժ) ուսը, գնաց շէշմէն (աղբիւր) ջուր բերուշի, տէստին էգիր օլուխին (ծորակին) տակ. ջուրը մէկ թարաւէն լցուիր կու, աղջիկը մէկ թարաւէն կաշէր հոն էղած տօնձի ծառին ու ինքն իրեն միտք կընէր, աշից ծառի փթած ճուղքերուն պիրլանպիր (յանկարծ) էղայկ ծունկերուն, էլաց ու ասաց:

— Վախ գիտի վախ, եիս էշտայի մաշղու, ինձիկի ըլլիր մօնչ մը, օնունք գնէի Գասպար, Գասպար մեծընար, զրկիցներու մօնչերու հիտ խաղէր, հիտարը իգա տեղ գէին, իգա փթած ծառի, վրան էլլէին, ծառի ճուղքը փետուիր, Գասպար ըզնիր

1. Տրապիզոնի գիւղերու մէջ իբր թէ ծառից ընկած է, իսկ Հայաստանի մէջ տեղ տեղ լսած նմ կամրէից ընկած ու մնած: